ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աստուծո օգնականությամբ և Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով, Մայր Աթոռում ձեռնարկվեց և իր լրումին հասավ Նոր Կտակարանի (չորս Ավետարաններ և Գործք առաքելոց) արևելահայերեն նոր հրատարակությունը, 1969 թ. դեկտեմբերին, Մայր Աթոռի տպարանից, 15 տպագրական մամուլ ծավալով, 472 էջ, 10000 տպաքանակով:

Չորս Ավետարանները և Գործք-ը, 1895 թ. Կ. Պոլսում հայոց պատրիարքարանի հսկողությամբ հրատարակված Աստվածաշնչի գրաբար բնագրից արդի արևելահայերենի են վերածել հոգևոր ճեմարանի դասախոսներ Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանը և Սամվել Անթոնյանը:

Սույն գործին իր օգտակար աշխատակցությունն է բերել նաև տ. Տիրան արքեպ. Ներսոյանը՝ բնագրային ճշտումներ կատարելով Նոր Կտակարանի օտար լեզվով գիտական վերջին հրատարակությունների հիման վրա:

Մայր Աթոռս մեծ ուրախությամբ է այս բարի լուրը հայտնում հայ եկեղեցու հոգևոր սպասավորներին և հավատացյալ ժողովրդին, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Մայր Աթոռում առաջին անգամն է, որ կատարվում է Նոր Կտակարանի արևելահայերեն հրատարակությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

27 հունվար 1970 թ.,
Ս. Էջմիածին